Ժիրայր Քոչարյան. ծնվել է Զուղա քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, այնուհետև ուսումնառությունը շարունակել Թեհրանում, որից հետո տեղափոխվել է Գերմանիա, ավարտել Բեռլինի պետական Ազատ համալսարանը, որտեղ և աշխատում է ներկայումս: «Ցեղասպանության ճանաչման հանձնախմբի» անդամ է, դոցենտ: Ծավալուն հրատարակչական աշխատանքներ է կատարում՝ ի նպաստ հայոց ցեղասպանության ճանաչման:

«Մենք ենք մեր ճակատագրի տերը»,–

ասում է Ժիրայր Քոչարյանը

- Պարոն Քոչարյան, նախ այն մասին, թե ինչ առիթով եք այցելել Երևան:

- Սա իմ հերթական այցն է, որն համընկավ ՀՀ արտգործնախարարության նախաձեռնած հանդիպմանը, որի նպատակն էր տարվելիք քարոզչական աշխատանքների քննարկումը ի շահ հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման:

- Իսկ ե՞րբ են առաջին անգամ Հայրենիքի դռները «բացվել» Ձեր առաջ:

- Մինչև 1990 թվականը չեմ կարողացել Հայաստան գալ, թեև միշտ էլ ցանկացել եմ ու սումս այստեղ ստանալ: Ցավոք՝ չի հաջողվել վիզա չեմ ստացել: Նշածս թվականին, երբ նշվում էր ցեղասպանության 75-ամյակը, երկու հոգի պետք է հրավիրվեր Գերմանիայից: Հրա վիրվողներից մեկը Թեսա Հոֆմանն էր, մյուսը ես էի: Ի դեպ, իմ հրավերին աջակցել էր աշ խարհահռչակ Վիկտոր Համբարձումյանը: Այս պես ես մասնակցեցի հայոց ցեղասպանությա նը նվիրված առաջին համաժողովին խոսելով Եղեռնին վերաբերող լուսանկարների մասին:

- Ապրիլ ամիսը նոր ենք շրջանցել, ուստի շարունակենք եղեռնի թեման: Այսօր 12 պետություն ընդունել է 20դդ դարասկզբի մեծա գույն նախճիրը Հայոց ցեղասպանությունը:

- Ավելի շուտ մոտավորապես 15 պետություն և միջազգային մի քանի կազմակերպություններ, ինչպես Համաշխարհային եկեղեցվո խորհուրդը, ՄԱԿ-ի ենթահանձնախումբը, որոնց պետք է հաշվել այդ պետությունների շարքում: Ինքս որպես «Մարդու իրավունքնե՝րի» կազմակերպության անդամ, կարծում եմ, որ հայոց ցեղասպանության ճանաչումը և դա տապարտումը շատ մեծ ազդեցություն կունե՝ նա ընդհանրապես ցեղասպանություն երևույթի վրա, քանի որ որոշ պետություններ իրենց երկրներում ազգային փոքրամասնությունների խնդիրները լուծելու փոխարեն, փորձում են նրանց բնաջնջել: Դժբախտաբար, Թուրքիայի պահվածքը օրինակ է հանդիսացել մյուս պետությունների համար:

Գալով նորից մեր գերխնդրին հայոց ցեղասպանությանը, վստահ եմ, որ մյուս երկրներն էլ դա կընդունեն, և Թուրքիան կդատապարտվի:

- Պարոն Քոչարյան, Դուք հայտնի «ճանաչում» աշխատանքային հանձնախմբի վարչության անդամ եք, որի նախագահն է հանյագետ Թեսա Հոֆմանը: Խոսենք այս կազմակերպության մասին:

- Ես այսօր Երևանում քննարկվող հարցերին մասնակցում եմ որպես այդ կազմակերպության ներկայացուցիչ: Այո, պարզ է, որ Գերմանիայում պիտի լիներ այդպիսի մի կազմակերպություն «Ցեղասպանության ճանաչման հանձնախումբը» (ես այսպես եմ անվանում), որը ստեղծվել է 3 տարի առաջ: Այս կազմակերպությունը հավաքեց 6000 ստորագրություն (11 հազար ստորագրություն էլ կար շնորհիվ «Կազմակերպություն ի դեմ ցեղասպանության» կառույցի, որի անդամները թուրքիո քաղաքացիներ են): Ահա այդքան ստորագրությամբ դի մեցինք Բունդեսթագի խնդրագրերի գրասեն յակին: Խնդրագիրն ընդունվեց, բայց հանձն վեց արտգործնախարարությանը: Առժամանակ հետո ստացանք պատասխանը: Ցավոք, այդ օրերին Գերմանիայում գործող «Հայ-գերմանական» ընկերությունը մի երկխոսություն էր կազմակերպել թուրքերի հետ, որին Հայաստանից չէր հրավիրվել ոչ ոք: Վերջին պահին Հակոբ Չաքրյանին հրավիրեցին, մինչդեռ Թուրքիայից 10-15 գիտնականներ կային: Նույն օրերին էլ գործում էր Հայ-թուրք հաշտեցման հանձնախումբը: Եվ սա պատճառ դարձավ վատ հետևանքի մեր խնդրագրին ի պատասխան գրել էին. «Քանի որ հայերը և թուրքերը խոսում են միմյանց հետ, շատ ավելի լավ է, որ մենք չխանգարենք և թողնենք, որ խնդիրն իրենք լուծեն...»: Կարելի է ասել, որ սա պատրվակ էր ընդամենը, բայց այդ երկխոսությունները մեզ շատ խանգարեցին: Բարեբախտաբար, երկու օր առաջ ՀՀ արտգործնախարարը շեշտեց, որ այդ կազմակերպություններից և ոչ մեկը չի ներկայացնում Հայաստանի Հանրապետությունը և հայ ժողովրդին: Ես խնդրեցի, որ դա բարձրաձայն և պաշտոնապես հայտարարվի աշխարհով մեկ, որպեսզի մյուս պետությունները, որոնք պիտի որոշումներ կայացնեն, լավ իմանան իրավությունները:

- Իսկ ուրի՞շ ինչ աշխատանքներ է տանում Ձեր կազմակերպությունը:

- Կապված ցեղասպանության հետ, կատարում ենք ճանաչողական աշխատանքներ ուսանողության շրջանում, լրագրողների հետ, տրամադրում ենք համապատասխան նյութեր, փաստաթղթեր, նախաձեռնում ենք ցուցահանդեսներ, դասախոսություններ, ցույցեր: Նշեմ հայ սպայի Մարգարյանի վայրագ սպանության առիթով մեր կազմակերպած ցույցը Ադրբեջանի դեսպանատան առջև...

Ես արդեն նշեցի խնդրագրի մասին: Ասեմ, որ այն հանձնելուց առաջ հանդիպումներ ունեցանք տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների հետ, ինչպես Կանաչնե՝ր, Քրիստոնեական սոցիալիստական միության (որը, վստահ եմ, իշխանության է գալու), Լիբերալիստական, Դեմոկրատական սոցիալիստների: Վերջինս մեզ բավականին օգնեց: Կանաչները մեզ նախօրոք խոստումներ տվեցին, բայց չօգնեցին... Քրիստոնեական սոցիալիստականը ևս դեմ է ցեղասպանության ընդունմանը, բայց մենք ենք մեր ճակատագրի տերը և պիտի կարողանանք մեր խնդիրները լուծել:

- Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի վարած արտաքին քաղաքականությունը ցեղասպանության ընդունման ուղղությամբ:

- Այդ ուղղությամբ նկատելի աշխատանք ներ տարվում են: Բայց, կարծում եմ, առկա է մի էական բաց Հայաստանում պիտի օրենք սահմանվի ցեղասպանության դեմ:

- Զրույցն ավարտելուց առաջ կուզեի՞ք ինչ-որ բան հավելել:

- Ասեմ, որ թուրքերը Գերմանիայում քնած չեն: Նրանք գրադարաններից «հավաքում» և ոչնչացնում են ցեղասպանությանը վերաբերող բոլոր գրքերը: Մենք ամեն ինչ անում ենք գտնելու, վերահրատարակելու դրանք: Այս պես, վերահրատարակել ենք «Թալեաթի դատավարությունը», այնուհետև առաջին անգամ տպագրվեց «Ցեղասպանություն, աքսոր, բնաջնջում» ամբողջական գիրքը, որից հետո «Լռության ոճիրը»: Թեսա Հոֆմանը միայն այս կարգի 10 գրքեր է գրել և հրատարակել: Իսկ իմ ատենս^ոսուքս^Լուշ. «Հայերի ճակատագիրը Բեռլինի կոնֆերանսից հետո» խորագիրն ունի: Այնպես որ, շուրջ 15 գիրք մենք արդեն իսկ հրատարակել ենք: Թեսայի տպագրած գրքերից ամենահայտնին «Հայերի վիճակն այսօր Թուրքիայում» գիրքն է, որը երեք լեզուներով՝ գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, նոր է լույս տեսել: Այս գիրքն արվեց այն ժամանակ, երբ Թուրքիայի Եվրամիությանն անդամակցելու խնդիրն առաջացավ: Գիրքը բաժանվեց այս միության անդամ երկրներին և շատ լավ արձագանք ունեցավ:

- Շնորհակալություն, պարոն Քոչարյան, Ձեր ազգանվեր գործունեության և նաև մեր այս հարցազրույցի համար, որը, կարծում եմ, շատերին կհետաքրքրի:

Զրույցը վարեց Հակոբ ՍՐԱՊՅԱՆԸ

Հարյուրավոր մարդիկ էին բողոքում

Ապրիլի 23-ից 26-ը Գերմանիայում տեղի ունեցան բազմաթիվ ընթերցումներ ու զեկուցումների ի հիշատակ 1915 թվականին թուրքերի կողմից իրականացված Եղեռնի զոհերի, այդ թվում Գերմանիայի մեծ քաղաքներ Բրեմենում, Մայնի Ֆրանկֆուրտում և Բեռլինում, որտեղ ապրիլի 23ին պոեզիայով ու երաժշտությամբ համեմված հիշատակի երեկոն բացվեց «Մեկ ձայնով խոսենք» կազմակերպության միջոցառումների փուլը.

Սոնա Էփերը, Բեռլինի հայկական եկեղեցու միության նախագահը, իր բացման խոսքում ասաց. «Նույնիսկ ցեղասպանությունից գրեթե 90 տարի հետո հայերը, արամեացիներն ու հույները ստիպված են պայքարել այս ոճիրի որպես ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Պատմական մի իրադարձություն, որը պարադոքսային կերպով որպես «բացահայտ գաղտնիք» է քննարկվում: Դա գիտեն բոլորը, սակայն ոչ մեկը չի ցանկանում այն հրապարակավ ընդունել կամ էլ սարսափելի բառը Եղեռնը արտաբերել:

Մենք այս մշակութային միջոցառումը տանում ենք «Եկել ենք, որ խոնարհվենք» բնաբանով: Մշակույթն այն հողն է, որը մեզ են կտակել Եղեռնի զոհերը: Մենք ակնածանքով ծնկի ենք գալիս այդ մարտիրոսների առջև: Մենք հիշում ենք նրանց և երախտապարտ ենք նրանց այն բանի համար, որ պայքարել են հանուն իրենց հավատի և ինքնության»:

Ապրիլի 24-ին մոտ 500 մարդ էին մասնակցում դոկտոր Ժիրայր Քոչարյանի («Ճանաչում» աշխատանքային հանձնախումբ) կազմակերպած ցույցին: Այն Բեռլինի կենտրոնական փողոցներից մեկով Քուրֆյուրստենդամով ուղղվեց դեպի Հարդենբերգ փողոցի այն մասը, որտեղ 1921-ին Սողոմոն Թեհլերյանը գնդակահարեց թուրքական մի դատարանի կողմից մահվան դատապարտված նախկին ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային: Ցուցարարների մեջ մեծ թիվ էին կազմում հայերը, ասորիները, ինչպես նաև հույները: Մի թուրք ցու- ցարարուհի կրում էր «Պատասխանատվություն պետք է կրել» մակագրությամբ ցուցանակ:

Թուրքիայի կենտրոնական հյուպատոսարանի դիմաց «Մեկ ձայնով խոսենք» կազմակերպության ատորի մի ներկայացուցիչ իր թուրքերեն լեզվով ելույթում ասաց.

«Ավելի քան երեք միլիոն հայերի, ասորիների ու հույների ցեղասպանությունը Թուրքիայի ոճրագործությունների սկիզբն է: Բոլոր զոհերը օսմանյան կայսրության քաղաքացիներ էին: Եվ նրանք քրիստոնյաներ էին: Դա բավական էր, որ նրանց անվանեին կարծեցյալ ներքին թշնամիներ, դավաճաններ, լրտեսներ և այլն:

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ ավելի քան 5 միլիոն քրիստոնյաներ էին ապրում այն ժամանակվա Թուրքիայում, բնակչության մեկ չորրորդ մասը: Ով 1912-1922 թթ. չսպանվեց, արտաքսվեց երկրից: Իր քրիստոնյա քաղաքացիների ոսկորների վրա հիմնված Թուրքիայի հանրապետությունը արտաքսվածներին զրկեց քաղաքացիությունից:

Գոնե այժմ, մոտ 90 տարի հետո, այդ պետությունը գոյո՞ւմ է հայրերի հանդեպ գործած ոճիրների համար: Եվրոպա տանող իր ճանապարհին հետևում է եվրոխորհրդարանի որոշումներին ու գոնե ընդունել է մեկ ու կես միլիոն հայերի դեմ գործած Եղեռնը որպես պատմական իրողություն:

Ոչ: Ընդհակառակը: Այդ պետությունը շարունակում է գոհաբերել միլիոնավորների իր նախկին հանցանքները թաքցնելու համար: Եթե Եվրոպան լրջորեն է վերաբերվում իր չափանիշներին ու արժեքներին, չի կարող իր կենտրոնում հանդուրժել մի պետության, որը անկարող է ու չի ուզում իր քրեական անցյալի հետ հաշիվներ մաքրել: Մենք ցեղասպանությունից կենդանի մնացածների ժառանգներս, հիշատակի այս օրը հավաքվել ենք, որպեսզի բողոքենք մեզ պատճառված տառապանքների դեմ»:

Երեկոյան բազմաթիվ ցուցարարներ մասնակցեցին Բեռլինի հայկական եկեղեցական համայնքի կողմից կազմակերպված հոգեհանգստի արարողությանը: Հուզիչ խոսքերով համայնքի հոգևոր հովիվ, հայր Աերովբե Իսահակյանն ասաց, որ 1915 թ. ապրիլի 24- ի զոհերի հիշատակը տասնամյակներ հետո էլ չի մթագնել, որովհետև նրանք որպես մարտիրոսներ անմահ են:

Գերմաներենից թարգմանեց Նաիրա ԱՎԱԳՅԱՆԸ

Նյութը մեզ տրամադրել է գերմանացի, ականավոր հայագետ, «Ճանաչում» աշխատանքային հանձնախմբի նախագահ, դոկտոր Թեսա ՀՈՖՄԱՆԸ